ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/1351 «12» 10 2021թ.

Ձեր

« ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (ՀՎՀՀ 02818636)
ք.Երևան, Սևանի 116,
էլ. հասցե՝ info@armeng.group

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ի միջև 16 հունիսի 2021թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով փորձագիտական լաբորատորիայի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռք բերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ն ստանձնած պարտավորությունները չի կատարել, մասնավորապես՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով պայմանագրի համաձայնագիր 2-ը, որով սահմանվելու էր «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից կատարվող աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում 30 աշխատանքային օրով, ինչպես նաև սահմանված ժամկետում չի կատարել 3 463 295 /երեք միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր իննսունհինգ / ՀՀ դրամի աշխատանքները :

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե աշխատանքի կատարման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ի միջև 16.06.2021թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով, կներկայացվի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները՝ 3 463 295 /երեք միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ և 346 329 / երեք հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր քսանինը/ ՀՀ դրամ գումար գանձելու նպատակով, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հարգանքով՝

Ոստիկանության գնդապետ **Վ.Մովսիսյան**